

VII ԳԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայագիտության մեջ լայնորեն հայտնի է VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ը, որը մեղ է հասել երկու խմբագրությամբ՝ համառոտ¹ և ընդարձակ², «Աշխարհացոյց»-ի մեղ հասած խմբագրությունները, առաջանալով նախնական մայր տեքստից, դարերի ընթացքում գրիչների կողմից արտագրվել են ու անցել սերնդից սերունդ: Անշուշտ, այդ ձեռագրերում ժամանակի ընթացքում տեղի են ունեցել ընդմիջարկումներ, դրանք խմբագրվել են ու համապատասխանեցվել տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությունը սկսվել է XVII դարից, այն թարգմանվել է լատիներեն, ֆրանսերեն և ռուսերեն: Վերջին տասնամյակներում Հայաստանում տպագրվել են մի շարք աշխատություններ, որտեղ փորձ է արվում միանգամայն նոր տեսակետից լուսաբանել «Աշխարհացոյց»-ի հետ կապված որոշ հարցեր:

1963 թ. հրատարակած «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» գրքի ներածականում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը գրում է. «Ուսումնասիրության ընթացքում մենք եկել ենք միանգամայն նոր եզրակացության մեղ հասած VII դարի սկզբի «Աշխարհացոյց»-ի բնույթի մասին»³: Քիչ հետո շարունակում է. «Մեր նոր եզրակացությունները հանգում են այն դրույթին, որ «Աշխարհացոյց»-ը սկզբում եղել է մոտավորապես 15 քարտեզների ժողովածու ատլաս, որոնց մեջ հիմնականը եղել է մեր կողմից վերակազմվող Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղվանքի քարտեզը»⁴: Այնուհետև գրում է. «Մեր նպատակից դուրս է տալ Անանիա Շիրակացու գիտական ժառանգության բնութագիրը. մենք կանգ կառնենք միայն «Աշխարհացոյց»-ի վրա, որը ղօվար թե պատկանի Անանիա Շիրակացու գրչին: Մեր նոր եզրակացությունները գալիս են ժրտելու այդ ընդհանրացած կարծիքը»⁵: Եվ ապա՝ «Աշխարհացոյց»-ի մանրազնին քննությունը բերում է նույն եզրակացության, որ նրա հեղինակը ճիշտ և ճիշտ նույն նպատակն է հետապնդել, ինչ որ Պտղոմեոսը, տալ քարտեզների ժողովածու ատլաս և միևնույն ժամանակ այդ քարտեզների տվյալները շարադրել առանձին, տարւմ աշխարհագրական ձեռնարկ՝ որը հասել է մեզ, իսկ քարտեզները բաժանել են Պտղոմեոսի քարտեզների բախտը՝ նրանք կորել են»⁶: Ս. Երեմյանն իր այս տեսակետը շարադրում է նաև մի այլ հոդվածում⁷: Մի ուրիշ հոդվածի առաջաբանում նա գրում է. «Աշխարհացոյց»-ի հեղինակի անունը հայտնի չէ... Բնագրի հետազոտությունից երևում է, որ աշխարհի մեղ չհասած ատլասը պարունակել է շուրջ 15 քարտեզ, որոնք են 1) «Աշխարհա-

1 К. Пятканов, Армянская география VII века, СПб., 1877.

2 A. Soukry, Geographie de Moïse de Corline d'après Ptolemee, Texte armenien traduit en français par le P. Arsen Soukry. Venise, 1881.

3 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 7:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 12:

6 Նույն տեղում, էջ 17:

7 С. Еремян, «Ашхарацуй» (Армянская география VII века)—выдающийся памятник географии и картографии древнего мира (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1963, № 5, էջ 43—60).

ցոյց» քարտեզ տիեզերաց, որը եղել է բոլոր քարտեզների հանրագումարը: ...«Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությունը այդպիսով, վկայում է, որ վաղ միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել զարգացած քարտեզագրություն, որը նախորդել է արաբական քարտեզագրությանը⁸:

1930 թ. հրատարակած մի ուրիշ հոդվածում նա զարգացնում է իր նախկին տեսակետը, այն տարբերությամբ միայն, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակ է համարում Ա. Շիրակացուն. «XIX դարում գիտության մեջ այն կարծիքն էր իշխում, թե իբրև «VII դարի Աշխարհացոյցը» Պտղոմեոսի աշխարհագրական աշխատության համառոտ տարբերակն է: Նաև այն ենթադրությունը կար, թե Պապոս Աղեքսանդրացու՝ Դիոկղետիանոսի (284—305) ժամանակակցի, «Երկրագրության» հայերեն շարադրանքն է: Ներկայումս վստահորեն կարելի է ասել, որ այդ աշխատասիրությունը հայ գիտնական Անանիա Շիրակացու ինքնուրույն ստեղծագործությունն է»⁹: «Աշխարհի հին հայկական ատլասը կազմող «Աշխարհի քարտեզը» և մյուս քարտեզները վերականգնելուց հետո հնարավոր է դառնում վերականգնել նաև հին հայկական գլոբուսը»¹⁰: 1984 թ. նա նույն դրույթն առաջ է տանում «Գիտություն և տեխնիկա» գիտահանրամատչելի պարբերականի էջերում¹¹:

Ս. Երեմյանի նոր եզրակացություններն իր իսկ վկայությամբ ոչ թե իր, այլ այլոց հետազոտական պրպտումների արդյունք են: Այս կապակցությամբ նա գրում է. «Աշխարհացոյց»-ի համապատասխան վկայությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պապոսը տալիս է Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» համառոտ շարադրությունը: Միևնույն ժամանակ «Աշխարհացոյց»-ը մի շարք տեղերում բառացի կրկնում է Պտղոմեոսի հայտնի երկը: Սա հիմք է տվել Ա. Սուբրյանին ենթադրելու, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Պտղոմեոսի գործերի հետ ծանոթացել է ոչ միայն Պապոսի միջոցով, այլև անմիջականորեն: Այս վերին աստիճանի ուշագրավ ենթադրությունը, որը անուշադրության են մատնել Ք. Պատկանյանը և Հ. Մանանդյանը, մանրազնին քննարկման է ենթարկել Ֆիշերը և հանգել է խիստ ուշագրավ և կարևոր եզրակացության: Նա ապացուցեց, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը իր ձեռքի տակ է ունեցել ոչ միայն Պտղոմեոսի բնագիրը, այլև նրա կազմած քարտեզները, որոնց հիման վրա պիտի գրված լիներ մեզ չհասած Պապոս Աղեքսանդրացու աշխարհագրական երկը»¹²:

Ք. Պատկանյանը «Աշխարհացոյցի» տեքստը տառ առ տառ համեմատել է Պտղոմեոսի աշխարհագրության տեքստի հետ և եկել հետևյալ եզրակացության. «Եթե Պտղոմեոսի և մեր հեղինակի միջև մեծ մասամբ ոչ միայն նմանություն է դիտվում, այլև շատ հաճախ՝ արտահայտությունների նույնություն, ապա դա հենց այն է ապացուցում, որ Պապոս Աղեքսանդրացու կորած տրակտատը ոչ թե ինքնուրույն աշխատություն է եղել, այլ Պտղոմեոսի ուղղակի համառոտագրություն»¹³:

Այս տեսակետի հետ համամիտ է նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը. «Սեն-Մարտենի և Պատկանյանի եզրակացությունները հիմնավոր լինելով սխալ է, անշուշտ Սուբրյանի հակառակ ենթադրությունը, որ իբրև թե «Աշխարհացոյց»-ը համառոտված է ոչ միայն Պապոսի, այլև Պտղոմեոսի աշխարհ-

⁸ Ս. Երեմյան, «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձը («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4, էջ 209—211):

⁹ С. Еремян, География и картография [в кн. «Культура раннефеодальной Армении (IV—VII вв.)», Ереван, 1980, с. 232]:

¹⁰ Նույն տեղում, էջ 235:

¹¹ Ս. Երեմյան, Երկրագունդը ըստ Անանիա Շիրակացու («Գիտություն և տեխնիկա», 1984, № 1, էջ 32—33):

¹² Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 11:

¹³ К. Патканов, Армянская география VII века, СПб., 1877, с. 4.

հաղրական երկերից (տե՛ս Սուքրյանի Ֆրանսերեն թարգմանության առաջաբանը, էջ 3—5)¹⁴։

Ա. Սուքրյանի ենթադրության համաձայն Ս. Երեմյանը վկայում է, որ Ֆիշերը իրր ապացուցել է, թե «Ախարհացոյց»-ի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է Պտղոմեոսի ոչ միայն բնագիրը, այլև նրա կազմած քարտեզները։ Սակայն «Ախարհացոյց»-ի հեղինակի վկայությունից չի բխում, որ նա իր ձեռքի տակ ունեցել է Պտղոմեոսի աշխատությունը։ Ում պետք է հավատալ. Ա. Շիրակացուն, թե՞ Ս. Երեմյանին ու Ֆիշերին։ Ս. Երեմյանը խուսափում է իր աշխատության ծավալուն ներածականում բացահայտ կերպով մեջ բերել Շիրակացու վկայությունը ու անտեղի հանդիմանում է Ք. Պատկանյանին ու Հակոբ Եանանդյանին։ Հենվելով Ա. Սուքրյանի և Ֆիշերի հիմնադրված ենթադրության վրա, նա փորձում է իր միանգամայն սխալ մտահղացումը վերագրել VII դարի հայ իրականությանը։

Այժմ տեսնենք, թե վերջին երկու տասնամյակի գիտական աշխատություններում Ս. Երեմյանի տեսակետին հակառակ տեսակետ պաշտպանվե՞լ է, թե՞ ոչ։ 1965 թ. Թ. Հակոբյանը գրեց մի ծավալուն գրախոսական, որտեղ սուր քննադատության ենթարկեց Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ Ախարհացոյց»-ի աշխատությունը։ Այդ գրախոսականը ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Ասածներինք կարելի է միայն մի եզրակացության հանգել. պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ Ախարհացոյց»-ի աշխատությունը և դրան կցված քարտեզը տառապում են ակադեմիական հրատարակություններին ոչ սազական ու անհերքի սխալներով ու թերություններով։ Ըստ Ախարհացոյց»-ի Հայաստանի և հարևան երկրների քարտեզը վերակազմելու հեղինակի «փորձը» անհաջող է»¹⁵։

1969 թ. պրոֆ. Ա. Աբրահամյանը տպագրեց «Ախարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը» հոդվածը (մանրամասն քննության առնելով Ս. Խաչատրյանի 1968 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» № 4-ում լույս տեսած «VII դարի Ախարհացոյցի մասին» խորագրով հոդվածը), որտեղ շարադրված են այն հարցերը, որոնք վերաբերում են «Ախարհացոյց»-ի և տիեզերագիտության մեջ նկատվող որոշ հակասություններին։ Ա. Աբրահամյանը ցույց տվեց, որ նշված աշխատությունների միջև ոչ մի հակասություն չկա և որ դա գրաբար տեքստը ճիշտ չհասկանալու, կատարված ընդմիջարկությունները և այլ հանգամանքները հաշվի չառնելու հետևանք է¹⁶։ 1971 թ., հայտնի փաստերի հետ մեկտեղ օգտագործելով պատմագիտական և մաթեմատիկական նոր եզրահանգումները, մենք գտանք, որ ճիշտ է Ք. Պատկանովի, Ա. Աբրահամյանի և ուրիշների տեսակետը. այն է՝ «Ախարհացոյց»-ի հեղինակը Ա. Շիրակացին է¹⁷։ 1979 թ. մեկ այլ հոդվածում «Ախարհացոյց»-ի կապակցությամբ քննելով Ս. Խաչատրյանի մի շարք սխալները, կողմնակիորեն մերժեցինք նաև «Ախարհացոյց»-ի քարտեզագրական բնույթի վերաբերյալ Ս. Երեմյանի տեսակետը¹⁸։ 1979 թ. լույս տեսավ Ա. Շիրակացու «Մատենագրության» աշխարհաբար թարգմանությունը (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Գ. Պետրոսյանի), որտեղ զետեղված է նաև

14 Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածը, Երևան, 1934, էջ 23։

15 Թ. Հակոբյան, Պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ Ախարհացոյց»-ի աշխատության մասին» (Համալսարանի «Գիտական տեղեկագիր», Երևան, 1965, հ. 96, պր. 8, էջ 85—96)։

16 Ա. Աբրահամյան, «Ախարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 226—240)։

17 Գ. Պետրոսյան, «Ախարհացոյց»-ի հեղինակի առեղծվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», 1971, № 10, էջ 54—60)։

18 Գ. Պետրոսյան, VII դարի հայկական «Ախարհացոյց»-ը («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 241—246)։

Շիրակացու «Աշխարհագրությունը»։ Առաջարանում և ծանոթագրություններում պաշտպանվում է Ս. Երեմյանին հակառակ տեսակետը¹⁹։

Այժմ կանգ առնենք «Աշխարհացոյց»-ի քարտեզագրական բնույթի վերաբերյալ Ս. Երեմյանի տեսակետի քննարկման վրա։ Ս. Երեմյանի նոր մտահղացումները հերքվում են «Աշխարհացոյց»-ի հեղինակի նշած և մեզ հասած հավաստի վկայություններով։ «Աշխարհացոյց»-ը բարեբախտաբար տվյալներ է պահպանել այն մասին, թե Շիրակացին իր աշխատությունը գրելիս ինչ աղբյուրներ է օգտագործել. «...Պտղոմեոս Կլավդիոսն ասպարեզական շափերով շափել է մարդկային բնակության երկարությունը՝ սկսելով արևմուտքից, այսինքն՝ Անծանոթ օվկիանոսի Իսպանիա երկրի հեռավոր ծայրամասից, և արևելքում հասել Անծանոթ երկրի Սինեայի եզրը՝ ողջ տարածությունը բաժանելով 180 աստիճանի։ Այսպես է վարվել նաև Երկրի լայնությունը շափելիս. սկսել է այրեցյալ գոտուց և հյուսիսում հասել Անծանոթ ծովը՝ (Անծանոթ) երկիրը (բաժանելով) 63 աստիճանի։ Նույնպես շափել է այրեցյալ գոտուց դեպի հարավ մինչև Անծանոթ երկիրը՝ 17 աստիճան, որով ամբողջ լայնությունը (ևս) լինում է 80 աստիճան։ Այս տարածությունից դուրս, ինչպես նշում է Պտղոմեոսը, ոչ ոք չի տեսել, ծանոթ չէ այլ երկրամասերի հետ, այդ պատճառով էլ (դրանից դուրս եկած երկրամասերը) կոչվում են Անծանոթ երկիր և (Անծանոթ) օվկիանոս։

Պապոս Աղեփսանդրացին վերցրել է նրանից (այսինքն՝ Պտղոմեոսից) երկրագնդի նկարագրությունը և համառոտել իր «Երկրագրություն» մեջ։ Նրանից մենք ծաղկափաղ ենք արել և գրում ենք այն, ինչ համարում ենք ամենից կարևոր և նշանավորը²⁰ (ընդգծումը մերն է—Գ. Պ.)։

Այս մեջբերումը որոշակի ցույց է տալիս, որ Պապոս Ալեքսանդրացին իր երկը գրել է Պտղոմեոսի աշխատության հիման վրա, նրանից վերցնելով ու համառոտելով այն, ինչ նա գտել է անհրաժեշտ։ Պապոս Ալեքսանդրացու աշխատությունը մեզ չի հասել։ Այդ փաստն արտացոլվել էր աշխարհագրության պատմության մեջ. «Բայց եղել են Պտղոմեոսյան «Աստղագիտության սիստեմի» լուրջ մեկնաբաններ. կարելի է, օրինակ, նշել Պապոսին և Թեոդոսին (Երկուսն էլ Ալեքսանդրիայից), որոնք գրել են շուրջ 320 և 380 թթ. և նույնիսկ զգալիորեն ավելի ուշ շրջանում ապրած հետազոտողների անունները։ Պապոսը կազմել է նաև երկրի նկարագրությունը, որը, ամենայն հավանականությամբ, հիմնված է Պտղոմեոսի տեքստի կամ քարտեզների վրա, բայց այդ նկարագրությունը հայտնի է սոսկ մի հայ պատմաբանի աշխատությամբ, որն օգտվել է Պապոսի աշխատությունից²¹։ Այստեղ նշվում է հայ պատմաբանի մասին, որովհետև երկար ժամանակ հայկական «Աշխարհացոյց»-ը սխալմամբ համարվում էր Մովսես Խորենացու աշխատությունը։ Միաժամանակ որոշակի երևում է, որ Պապոս Ալեքսանդրացին Պտղոմեոսի տեքստի կամ քարտեզի հիման վրա համառոտաբար կազմել է Երկրի նկարագրությունը։ «Աշխարհացոյց»-ի հեղինակը որպես սկզբնաղբյուր ունեցել է Պապոսի երկրի նկարագրությունն ու, իր հերթին համառոտելով Պապոսի աշխատությունը, կազմել է Երկրի նկարագրությունը, այսինքն՝ «Աշխարհացոյց»-ը։ Ինչպես պարզ երևում է, հայ հեղինակը ոչ մի խոսք չի ասում քարտեզ կազմելու մասին։

«Աշխարհացոյց»-ի մեջ մի այլ տեղ Շիրակացին գրում է. «Եվ անա, փառն ու մենք ամփոփեցինք [աշխարհագրությունը] ընդհանուր մասը, այժմ սկսեցինք խոսել առանձին երկրների մասին ըստ Պապոս Աղեփսանդրացու՝ սկսելով օվկիանոսի արևմտյան մասից, այսինքն՝ երկարության առաջին աստիճանից, Սպանիայից, այն ծայրամասից, որը կոչվում է Եգիպտոս, որ նշանակում է Մեծ և հրաշալի»²² (ընդգծումը մերն է—Գ. Պ.)։

¹⁹ Տե՛ս Ա. Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979։

²⁰ Ա. Շիրակացի, Աշխարհացոյց, Երևան, 1979, էջ 260։

²¹ Д. Ж. Томсон, История древней географии, М., 1953, с. 510.

²² Ա. Շիրակացի, Մատենագրություն, էջ 269։

«Սպանիան իր մեջ ընդգրկում է երեք փոքրիկ երկրամաս, որոնք և ունեն րազում քաղաքներ, նրանք անուններով հիշելն անշահ համարեցինք [մենք ցանկացանք գրել ոչ բոլոր գալառների և քաղաքների մասին, այլ նշանավորների՝ խոշոր գետերի] և հոյակապ քաղաքների, բաց թողնելով թվերը, չափերը, դանց առնելով աննշանները»²³:

Այս մեջբերումը նույնպես որոշակի ցույց է տալիս, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը համառոտաբար տալիս է երկրների նկարագրությունը, աղբյուր ունենալով Պապոսի աշխատությունը: Այստեղ նույնպես ոչ մի խոսք չկա քարտեզ կազմելու մասին: Իսկ Հայաստանը նկարագրելիս Շիրակացին ասում է. «Այժմ ցանկանում եմ նրանց մասին մանրամասն խոսել քանի որ փոքր ինչ աշխատել եմ գրի և ֆաբեզի վրա»²⁴ (ընդգծումը մերն է—Գ. Պ.):

«Աշխարհացոյց»-ի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ նրա հեղինակը Հայաստանը և հարակից երկրները նկարագրում է շատ մանրամասն, և դա բնական է: Այստեղ նա օգտագործում է Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ եղած նյութերը՝ գրականությունը և այդ երկրների քարտեզները: Նշելով այն քարտեզների առկայությունը, որոնք օգտագործել է իր «Աշխարհացոյց»-ը շարադրելիս՝ Շիրակացին նոր քարտեզ չի կազմում, այլ եղած առանձին երկրների քարտեզներից համապատասխան նյութ է քաղում իր աշխատության մեջ այդ երկրների, հատկապես Հայաստանի մասին: Արև կարևոր հանգամանքը «Աշխարհացոյց»-ը ուսումնասիրողների ուշադրությունից երբեք չպետք է վրիպի: Շիրակացին գործածում է «քարտեզ» բառը՝ շատ լավ հասկանալով դրա իմաստը: Եթե «Աշխարհացոյց»-ի հեղինակը երկրագնդի մասին քարտեզ կազմած լիներ, գոնե մի անգամ կնշեր, որ ինքը ցանկանում է կազմել աշխարհի քարտեզը: Այդպիսի բան «Աշխարհացոյց»-ի մեջ գոյություն չունի: Ընդհակառակը, հայ հեղինակը գոյություն ունեցող քարտեզներից Հայաստանի ու հարակից երկրների մասին շատ հարուստ նյութ է վերցնում ու մտցնում իր աշխատության նկարագրական տեքստի մեջ: Այդ քարտեզների առկայությունը ապացույց է այն բանի, որ Արշակունիների ժամանակ քարտեզագրությանը որոշակի տեղ է տրվել: Պատահական չի կարելի համարել այն փաստը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը գրի է առել Հայաստանի Արշակունիների պետության ժամանակվա մանրամասն տեղեկությունները:

Այս բոլորը ցույց է տալիս, որ Ս. Երեմյանի նոր եզրակացություններն ու դրույթները չեն բխում «Աշխարհացոյց»-ի տեքստից:

Հայաստանում վաղ ֆեոդալիզմի շրջանում քարտեզագրությունը բարձր մակարդակի վրա գնելու նպատակով Ս. Երեմյանը գնում է սխալ ճանապարհ: 1963 թ. իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» երկի ներածության մեջ նա Ա. Դիտմարից հետևյալ քաղվածքն է բերում. «Այս ժամանակաշրջանում աստղագիտությունն ու քարտեզագրությունը մեծ ծաղկում ապրեցին ադեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչների գործերում, որոնք երկար ժամանակ ազդում էին գիտության այդ ճյուղերի զարգացման վրա՝ հին հայերի ու արաբների մոտ, և նրանց միջոցով այնուհետև անցան Արևմտյան Եվրոպա»²⁵: Իսկ իրականում ահա թե ինչ է ասում Ա. Դիտմարը. «Այդ ժամանակաշրջանում հին աշխարհի աստղագիտությունն ու քարտեզագրությունը իրենց ավարտուն արտահայտությունն են գտել Պտղոմեոսի աշխատություններում, որոնք երկար ժամանակ վիթխարի ազդեցություն են ունեցել գիտելիքների այդ բնագավառների հետագա զարգացման վրա արաբների մեջ և Եվրոպայում»²⁶: Ինչպես տեսնում եք, Ա. Դիտմարի մոտ հին հայերի մասին ոչ մի հիշատակություն չկա և դա Ս. Երեմյանի հավելագրումն է:

²³ Նույն տեղում, էջ 270:

²⁴ Նույն տեղում, էջ 291:

²⁵ Ս. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 9:

²⁶ S.M. Д. Ж. Томсон, նշվ. աշխ. (Вступительная статья А. Дитмара, с. 15):

Օգտագործելով Ա. Դիտմարի անունը, Ս. Երեմյանը ցանկանում է իր ընթերցողներին հոգեբանորեն նախապատրաստել «Աշխարհացոյց»-ի տեքստի իր մեկնաբանման նոր գրույթին, այսինքն, որ աշխարհագրությունը և քարտեզագրությունը Հայաստանում այդ ժամանակաշրջանում գտնվել է զարգացման բարձր աստիճանի վրա: Ավելին, ըստ Ս. Երեմյանի ձևակերպման ստացվում է, որ արաբների և հայերի միջոցով է, որ այդ գիտությունները փոխանցվում են արևմտյան Եվրոպա: Այնուհետև Ս. Երեմյանը շարունակում է. «Անտիկ հասարակարգի կործանումից հետո նրա ոլորտում ընկած երկրներից Հայաստանը միակ երկիրն էր, որտեղ շարունակում էին զարգանալ աշխարհագրությունն ու քարտեզագրությունը, սակայն արաբական արշավանքների հետևանքով առաջացած երկրի քաղաքական ու տնտեսական անկումը երկար ժամանակով ընդհատեց այդ գիտությունների հետագա զարգացումը մեր երկրում»²⁷:

Բնական հարց է առաջանում. այդ ինչպե՞ս է, որ պետականությունը կորցնելուց հետո Հայաստանը դարձավ միակ երկիրը, որտեղ շարունակում էին զարգանալ աշխարհագրությունն ու քարտեզագրությունը, և եթե զարգացումը կասեցվել է արաբների կողմից, ապա ինչպես է հետագայում հայերի և արաբների միջոցով այդ գիտությունը փոխանցվել Եվրոպա:

Այս ամենից որոշակիորեն երևում է, որ Ս. Երեմյանը նշված հարցերը լուսաբանելիս բոլորովին խճճվել է: Աշխարհագրության պատմության մեջ նշված է հետևյալը. «Այդ ժամանակաշրջանում հայտնի երկրի սիստեմատիկ նկարագրությունները իբրև օրենք, իրենցից ներկայացնում են խղճուկ բանաքաղություններ, երբեմն Պտղոմեոսից, բայց ավելի հաճախ Պլինիոսից, որն ինքը վատ բանաքաղ էր: Աշխարհագրության տեսության բնագավառում, ներառյալ, լավագույն դեպքում, կրկնում էին հինը, լավ թե վատ հասկանալով արդեն արվածը»²⁸:

Մի քանի խոսք Ս. Երեմյանի կազմած քարտեզների մասին: Որպես օրինակ վերցնենք «Գիտություն և տեխնիկա» գիտահանրամատչելի պարբերականում զետեղված քարտեզը: Այդ քարտեզի վերնագրում նշվում են Պապոսի և Պտղոմեոսի անունները, իսկ քարտեզի տակ գրվում է. «Աշխարհի քարտեզը ըստ աշխարհացոյցի»²⁹:

Ինչպես տեսանք, Շիրակացին իր ձեռքի տակ ունեցել է միմիայն Պապոսի աշխատությունը, որը մեզ չի հասել: Եթե Պապոսը, կրճատելով Պտղոմեոսի աշխատությունը, իր երկրագրությունը կազմելիս որոշ չափով պահպանել է բնականվայրերի կոորդինատների աղյուսակները, որոնց հիման վրա կարելի է քարտեզ պատրաստել, ապա Շիրակացին վկայում է, որ իր աշխատանքը գրելիս աչքաթող է արել այդ բոլոր թվերը, չափերն ու մանրամասնությունները: Դա նշանակում է, որ «Աշխարհացոյց»-ի հիման վրա լիակատար քարտեզ պատրաստելն անհնար է:

Ամփոփենք՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր աշխատությունը գրելու համար որպես հիմնական աղբյուր օգտագործել է Պապոս Ալեքսանդրացու աշխատությունը, Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ գրականությունն ու քարտեզները: Հայ հեղինակը կազմել է իր ժամանակին հայտնի աշխարհի նկարագրությունը, որը դարձել է աշխարհագրության ձեռնարկ: Ս. Երեմյանը, անտեսելով անցյալի և ժամանակակիցների կողմից կատարված աշխատությունների արդյունքները, վերջին քսան տարիների ընթացքում տպագրված աշխատություններում ու միջազգային տարբեր գիտաժողովներում կարդացած զեկուցումներում սխալ մեկնաբանություն է տալիս VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի հետ կապված հարցերին: «Աշխարհացոյց»-ի մի-

27 Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 9:

28 Д. Ж. Томсон, нշվ. աշխ., էջ 485:

29 Ս. Երեմյան, Երկրագունդը ըստ Անանիա Շիրակացու («Գիտություն և տեխնիկա», 1984, № 1, էջ 32—33, տե՛ս քարտեզը):

շոցով մեղ են հասել երկարության չափեր, Հայաստանի և հարակից երկրների մասին շատ կարևոր տեղեկություններ, որոնք չեն պահպանվել այլ ժողովուրդների մոտ: Այդ նյութերի հիման վրա գրվել են մենագրական աշխատություններ ու արժեքավոր հոդվածներ: Այդ տեսակետից «Աշխարհացույց»-ը ստանում է միջազգային նշանակություն: «Աշխարհացույց»-ի հեղինակի մեծ ծառայությունն այն է, որ նա վաղ ֆեոդալիզմի մոայլ ժամանակներում կարողացել է նկատել հելլենիստական շրջանի Ալեքսանդրյան դպրոցի կարկառուն ներկայացուցիչ Պտղոմեոսի լուսամիտ գաղափարները աշխարհագրության բնագավառում ու այն տարածել է Հայաստանում:

ОБ ОДНОЙ ПОПЫТКЕ НОВОГО ОСВЕЩЕНИЯ АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ VII ВЕКА—«АШХАРАЦУЙЦА»

ГАРЕГИН ПЕТРОСЯН

Р е з ю м е

Для написания своего труда автор «Ашхарацуйца» в качестве основного источника использовал труд Паппа Александрийского, литературу и карты об Армении и сопредельных странах. Армянским автором дано описание известного в то время мира, представляющее собой пособие по географии.

С. Т. Еремян в течение последних двух десятилетий в своих работах приходит к ошибочным выводам относительно некоторых вопросов, связанных с армянской географией VII века—«Ашхарацуйца». Точка зрения С. Т. Еремяна о якобы высоком уровне географии и картографии, существующем в период раннего феодализма в Армении, не соответствует действительности.

Посредством «Ашхарацуйца» до нас дошли меры длины, весьма важные сведения об Армении и сопредельных странах, не сохранившиеся у других народов. На основе этих материалов написаны ценные монографии, статьи. С этой точки зрения «Ашхарацуйц» имеет международное значение. Заслуга автора «Ашхарацуйца» состоит в том, что он сумел заметить прогрессивные идеи выдающегося представителя эллинистического периода Птолемея в области географии и распространил их в Армении.